

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 22.09.2020թ. թիվ 2011648740 որոշումը անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<18>> 11 2020թ. 7-13-

14538

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Վահրամ Սարգսյանի ՄԴ/149358-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Քաղաքացի Վահրամ Սարգսյանը (**ծանուցման հասցե՝** քաղաք Երևան, Արաբկիր վարչական շրջան, Ա.Խաչատրյան փողոց, 18-րդ շենք, 70-րդ բնակարան) դիմումով խնդրել է անվավեր ճանաչել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011648740 որոշումը՝ նշելով, որ կանգառը կատարել է իր առջևի տրանսպորտային միջոցի կանգնելու պատճառով, որից հետո փորձել է շրջանցել, ինչը հնարավոր չի եղել, քանի որ կստեղծվեր վթարային իրավիճակ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական ակտն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ-ի թիվ 955-Ն որոշման 84-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ **կանգառն արգելվում է հետիոտնային անցումների վրա** և շարժման ուղղությամբ հետիոտնային անցումից առաջ՝ 5 մ մոտ վայրում: Նույն որոշման 106-րդ կետի համաձայն՝ հետիոտնային անցումից հետո խցանում առաջանալու դեպքում արգելվում է մուտք գործել անցում, եթե դա կհարկադրի վարորդին կանգնել հետիոտնային անցման վրա:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 26-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից տրանսպորտային միջոցը հետիոտնային անցման վրա կանգնեցնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր:

Հարկ է նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 26-րդ մասով նախատեսված արարք կատարելու համար նվազ նշանակություն ունենալու որևէ պայման նախատեսված չէ (կանգառի տևողություն, ուղևոր նստեցնելու կամ իջեցնելու նպատակով կանգառ կատարել, անզգուշություն, դիտավորություն և այլն):

Իրավախախտումն արձանագրած տեսանյութից հստակ երևում է, որ «<HYUNDAI>> մակնիշի 25US686 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը 01.09.2020թ. ժամը 14:43-ին Երևան քաղաքի Տերյան - Մոսկովյան փողոցների խաչմերուկի հատվածում կանգառ է կատարում հետիոտնային անցման վրա:

Այսպիսով, դիմումատուի արարքում առկա են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 26-րդ մասի հատկանիշները, հետևաբար վարչական տույժ նշանակելու մասին որոշումն օրինական է և իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 22.09.2020թ. թիվ 2011648740 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Վահրամ Սարգսյանին:



Ե. Կարապետյան